Համլետ Սիմոնյան
Երևանի պետական համալսարանի Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի մագիստրոս
Էլ. հասցե՝ hamlet.simonyan.99@gmail.com
DOI: 10.53614/18294952-2021.2-82

ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀՂԱՑՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում ներկայացված են միջսերնդային արդարության հղացքը այս կամ այն կերպ սահմանափակող փիլիսոփայական մտայնություններ: Քանի որ նշված սահմանափակումները չեն գործում առկախ վիճակում, նախևառաջ փորձ է արված ներկայացնել «միջսերնդային արդարություն» և «պատասխանատվություն» եզրույթների կապը: Կարևոր անդրադարձ է կատարված ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու, ինչպես նաև ապագա սերունդների՝ իրավունքներ ունենալու հիմնախնդրին, մասնավորապես՝ վերջիններիս անհրաժեշտությունը բացառող բարոյագիտական ուսմունքների: Հոդվածում ներառված է նաև փարֆիթյան ոչ-նույնականության խնդիրը՝ որպես միջսերնդային արդարության հղացքի սահմանափակումներից մեկը: Աշխատանքը նպատակ ունի վերհանել միջսերնդային արդարության հղացքի շուրջ կառուցարկվող բարոյագիտական ուսմունքների թերի կողմերը՝ մատնացույց անելով տեսական սահմանափակումները, որոնք էլ իրենց հերթին ազդում են խնդրի առարկայացման վրա գործնական դաշտում: Աշխատանքի նպատակներից է նաև հանրության շրջանում բարձրացնել թեմայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Հոդվածում արտացոլված են արդարության տեսություններ, որոնք յուրովի ներկայացնելով ապագա սերունդների և ներկայիս մարդկանց միջև հարաբերությունների հստակ հրամայականը, հանգում են այն եզրակացությանը, որ սերունդների միջև արդարության թեման հղի է մի շարք բացերով և սահմանափակումներով:

Հիմնաբառեր. արդարություն, պատասխանատվություն, իրավունքներ, ապագա սերունդներ, ոչ-նույնականության խնդիր:

Ներածություն

Միջսերնդային արդարության հղացքին վերաբերող բարոյագիտական մտայնություններում բավականին ուշագրավ է մեր՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու խնդիրը: Միջսերնդային արդարությունը վերաբերում է թե՛ ներկայիս, թե՛ ապագա սերունդներին, ավելի կոնկրետ՝ այն ներառում է ներկայիս ու ապագա սերունդների միջև հարաբերությունները արդարության տեսանկյունից: Այսինքն՝ միջսերնդային արդարությունն ունի ժամանակային կենտրոնացում. վերջինս կարող է վերաբերել թե՛ միջժամանակային՝ ներկա և ապագա սերունդներին, թե՛ միևնույն ժամանակում ապրող երիտասարդ ու տարեց սերունդներին: Կարևոր է նշել նաև, որ միջսերնդային արդարությունը կիրառելի չէ միևնույն ժամանակամիջոցում ապրող նույն տարիքի մարդկանց շրջանում: Հատկանշական է այն փաստը, որ միջսերնդային արդարությանը վերաբերող հանրային քննակումները (անկախ այն բանից, թե դրանք բնապահպանության, առողջապահության, սոցիալ-տնտեսական, կամ այլ ոլորտների են վերաբերում) մեծմասամբ անդրադառնում են մեր՝ ներկայումս ապրող մարդկանց՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու հարցին: Մինչ մտածողների մի ստվար զանգված գտնում է, որ մենք, պատասխանատվություն ստանձնելով ապագայում ապրողների հանդեպ, պետք է վերանայենք մեր գործողությունները՝ ապագա սերունդների բարօրության համար, մեկ այլ հոսանք այն կարծիքին է, որ որևէ հիմք չկա ապագայում ապրողների մասին հոգալու, առավել ևս՝ մեր գործողությունները փոխելու:

Մեթոդը և տեսական հիմքը

Հոդվածի համար տեսական հիմք են հանդիսացել վերջին շրջանի արևմտյան ականավոր մտածողների արդարության ուսմունքները, որոնք կարևոր շեշտադրում ունեն ոչ միայն ներկայիս, այլև ապագա սերունդների հետ կապված փիլիսոփայական մտայնությունների վրա: Աշխատանքի շրջանակներում համապատասխան բնագրերի վերլուծության միջոցով փորձ է արված ցույց տալ սերունդների միջև արդարության՝ որպես փիլիսոփայական թեմայի խարխուլ հիմքերը: Այս կերպ համեմատական մեթոդի շնորհիվ հնարավոր է դառնում զուգահեռնել նշմարել որոշ կարևոր ուսմունքների միջև:

Միջսերնդային արդարության հղացքը սահմանափակող բարոյագիտական հիմնաքարերը. պատասխանատվություն և իրավունքներ

Ներկայիս պայմաններում ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությունը, որը նախկինում քիչ թե շատ դիտվում էր որպես ավանդական «պատասխանատվություն» տերմինի բաղկացուցիչ մաս, վերջին տասնամ-

յակներում, կարելի է ասել, նորովի իմաստավորվեց: Ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն կամ որևէ պարտավորություն ունենալու հարցը հետզհետե տարանջատվեց պատասխանատվության վերաբերյալ համընդհանուր քննարկումներից՝ դառնալով հանրային քննարկման առանձին թեմա և ստանալով անհամեմատ ավելի մեծ ուշադրություն, քան նախկինում: Բանն այն է, որ նախորդ դարից սկսած՝ մարդկությունը ավելի տեղյակ է դարձել շրջակա միջավայրի անընդհատ աճող խնդիրներից, որոնք մասամբ առաջացել են տնտեսական և տեխնոլոգիական զարգացման արդյունքում: Նախանշվում է նաև, որ այս կործանարար գործընթացն արագանում է, ու հետագայում խնդիրները նույնիսկ ավելի ծանր կլինեն: Այս համատեքստում առանցքային մտահոգությունն այն է, թե արդյոք բացասական հետևանքներ առաջացնելու մեր կարողությունը ինչ-որ կերպ պարտավորեցնո՞ւմ է մեզ փոխել մեր իսկ գործողությունները: Ավելորդ է նշել, օրինակ, որ ներկայիս որոշ գործողություններ կարող են վնասել մեզնից հարյուր տարի հետո ապրող սերունդներին: Հարց է առաջանում՝ արդյոք դա բավարո՞ր պատճառ է, որ մենք, վերանայելով մեր գործողությունները, գործենք այլ կերպ: Նմանատիպ հարցադրումները տանում են ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության վիճահարույց հարցին, նաև նրան, թե ինչպես կարող է այդ պատասխանատվությունն ազդել ներկայիս մարդկանց գործողություններին: Ուստի՝ սույն աշխատանքի շրջանակներում քննարկվելու են փիլիսոփայական այն մտայնությունները, որոնք ջանում են ցույց տալու, որ միջսերնդային արդարության հղացքը, այնուամենայնիվ, ունի որոշակի սահմանափակումներ. վերոնշյալ սահմանափակումները, եթե փորձենք պարզ ձևով արտահատել, բխում են այն մտքից, որ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու և մեր գործողությունները փոխելու որևէ պատճառ չկա:

Վերը նշվածի համատեքստում հատկանշական է անդրադառնալ **պատմական լավատեսների** կողմից բերվող փաստարկներին: Նրանք համակարծիք են այն հարցում, որ կարիք չկա վերանայելու կամ փոխելու մեր գործողությունները, քանի որ մարդկության պատմության մեջ կան որոշ համընդհանուր միտումներ, որոնք ի վերջո կհանգեցնեն **ապագա սերունդների մեծագույն օգուտին:** Այս լավատեսությունը, բնականաբար, ավելորդ է դարձնում ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության մասին խոսելը: Առանձնացվում են չորս հիմնական փաստարկներ, որոնք բերվում են հօգուտ վերոնշյալ լավատեսության.

- **տեխնոլոգիական առաջընթաց.** սրանից բխում է այն ողջամիտ ենթադրությունը, որ մարդիկ, բավականաչափ ճարպիկ լինելով, իրենց առջև ծառացած խնդիրների մեծ մասը ի վիճակի կլինեն լուծել տեխնիկայի և տեխնոլոգիայի առաջխաղացման շնորհիվ,
- **ռեսուրսների փոխարինում/փոխհատուցում.** յուրաքանչյուր բնական ռեսուրս կարող է փոխարինվել կամ այլ բնական ռեսուրսներով, կամ մարդաստեղծ ռեսուրսներով,
- **սակավությունը կփոխի դրդապատճառները.** տնտեսական այս

պնդումն ասում է, որ ռեսուրսների սակավությունը տնտեսապես պարարտ հող կդառնա նոր գործիքակազմ ստեղծելու կամ էլ ներկայի վարքաձևը փոխելու համար, այսինքն՝ վարքի մի ձևը ավելի ձեռնտու կդառնա, քան մյուս տեսակները,

- **հարստության կուտակում.** անառարկելի փաստ է այն, որ կապիտալ ռեսուրսների միջսերնդային փոխանցումները եկող սերունդներին ավելի հարուստ են դարձրել, քան նախորդներն էին (ի դեպ, կուտակվող ռեսուրսների շարքում նշվում է նաև մարդկային գիտելիքը)։ Կուտակման շնորհիվ ապագա սերունդները կկարողանան հաղթահարել բնապահպանական ծախսերը, ինչպես նաև էական տեխնիկական ներդրումների անհրաժեշտությունը։ Կարևոր է նկատել, սակայն, որ կուտակման գործընթացը լավատեսների աչքերով ոչ թե արհեստականացված, պարտադրված բնույթ է կրում, այլ ի բնե մարդկային անքակտելի հատկություն է։ Այս պնդումը, կարելի է ասել, թե՛ տեսական, թե՛ գործնական առումով հակասում է Ջոն Ռոլսի (վերջինս հայտնի է որպես միջսերնդային արդարության հղացքի ջատագովներից մեկը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով մեր՝ ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու հարցին) տեսությանը։ Ռոլսն առաջ էր քաշում արդար խնայողությունների սկզբունքը (just savings principle)։ Վերջինս հեղինակը քննարկում էր սոցիալական նվազագույնի (social minimum) գաղափարի վերլուծության շրջանակներում։ Արդար խնայողութ-յունների սկզբունքը պահանջում է, որ մենք բավարար կապիտալ և ռեսուրսներ թողնենք ապագա սերունդների համար՝ սկսելով փոխանցումներ անել մերօրյա ամենավատթար վիճակում գտնվողներին (Rawls, 1971, էջ 251–252)։ Ակնհայտ է, որ ամերիկացի մտածողն այս համատեքստում մեծ նշանակություն էր տալիս պատասխանատվության խնդրին։

Վերոնշյալ չորս փաստարկները ենթադրում են, որ ապագա սերունդները հարուստ ու բարվոք վիճակում կլինեն, քան մենք, կամ առնվազն կլինեն նույն վիճակում, որում մենք ենք, սակայն ոչ երբեք ավելի վատթար վիճակում (Löfquist, 2008, էջ 13–15)։

Միջսերնդային արդարության հղացքի սահմանափակումներից մեկն էլ ապագա սերունդների՝ իրավունքներ ունենալու վիճահարույց հարցն է։ Այս իմաստով առաջ են քաշվում որոշ հիմնական խնդրահարույց փաստարկներ ընդդեմ այն թեզի, որ ապագա սերունդները, ներկայիս սերունդի հետ համեմատած, ունեն իրավունքներ։ Առաջին փաստարկը պարզ է. այն ուղղակիորեն նշում է, որ «ապագայի մարդիկ ապրելու են ապագայում, հետևապես՝ կարիք չկա մտածելու նրանց՝ իրավունքներ ունենալու/չունենալու հարցի շուրջ։ Մյուս դժվարությունն այն է, որ մենք նախևառաջ պետք է ապագա սերունդներին գոյության իրավունք վերագրենք։ Ըստ հաջորդ խնդրի՝ մեր ներկայիս իմացական վիճակը թույլ չի տալիս ապագայի մարդկանց առնչվել որպես անհատների։ Եվս մի հակափաստարկ սահմանում է, որ ապագայի մարդիկ չեն կարող պահանջել որևէ իրավունք ներկայիս ապրողների նկատ-

մամբ, ինչպես նաև չեն կարող որևէ պատժամիջոց կիրառել ներկայիս մարդկանց նկատմամբ՝ համապատասխան պարտականությունները չկատարելու համար» (Meyer, 2016):

Գուցե չափազանց պարզ թվա, բայց շատ փիլիսոփաներ պնդում են, որ ապագա սերունդները չեն կարող ունենալ իրավունքներ հենց միայն այն պատճառով, որ նրանք ապրելու են ապագայում: Ապագա սերունդները, ըստ էության, ներկայումս գոյություն չունեն, ուստի չեն կարող լինել որևէ բանի ներկայիս կրողը, առարկան, ներառյալ՝ իրավունքների: Այստեղից հետևություն. այն պնդումը, թե մենք ներկայումս կարող ենք ոտնահարել ապագայի մարդկանց իրավունքները, չի ենթադրում, որ ապագայի մարդիկ ներկայումս իրավունքներ ունեն: Ակնհայտ է, որ ապագա սերունդների՝ իրավունքներ չունենալու վերաբերյալ պնդումները անհնարին են դարձնում միջսերնդային արդարության՝ որպես տեսության գոյությունը՝ կասկածի տակ դնելով դրա հիմնարարությունը:

Ուիլֆրեդ Բեքերմանը ապագայի մարդկանց՝ բարոյական իրավունքներ ունենալու գաղափարի ամենախիստ քննադատներից է: Մտածողի անդրադարձը վերոնշյալ հարցին բավականին պարզ ձևով ներկայացված է Թրեմելի գրքում. «Նախ ապագա սերունդները, որոնք դեռևս ծնված չեն, որևէ իրավունք չեն կարող ունենալ: Արդարության ցանկացած կոհերենտ տեսություն ենթադրում է մարդկանց իրավունքներ շնորհել: Հետևաբար՝ ապագա սերունդների շահերը չեն կարող պաշտպանվել կամ խթանվել արդարության որևէ տեսության շրջանակներում» (Tremmel, 2006, էջ 53–54): Այնուամենայնիվ, սա, ըստ Բեքերմանի, չի նշանակում, որ ապագա սերունդները չունեն բարոյական դիրքորոշում, չի նշանակում նաև, որ մենք նրանց նկատմամբ բարոյական պարտավորություններ չունենք: Ըստ Բեքերմանի՝ այն ենթադրությունը, որ ապագա սերունդները չեն կարող ունենալ որևէ բան, ներառյալ՝ իրավունքներ, բխում է **«ունենալ» բայի ներկա ժամանակի** իմաստից: «Նրանք չեն կարող ունենալ երկու ոտք կամ երկար մազեր կամ էլ Մոցարտի հանդեպ ճաշակ» (Beckerman, 2004, էջ 3): Հետաքրքիրն այստեղ այն է, որ մտածողը ջանքերն ուղղում է ոչ թե թիրախավորելու իրավունք հասկացությունը՝ փորձելով այլափոխել վերջինս դեպի հետաքրքրության, շահի, կարիքի կամ ցանկության, այլ ավելի շատ միտված է փոփոխելու օգտագործվող բայի ժամանակաձևը: Արդարացի լինելու համար պետք է նշել, որ Բեքերմանի վերոնշյալ փաստարկը, որը մասնագիտական գրականության մեջ սխալմամբ ընկալվել է որպես էական խնդիր, իրականում ոչ այնքան կարևոր նշանակության է: Թրեմելն այս առիթով իրավացիորեն նկատում է, որ այս փաստարկը բավականին անհիմն է և ժամանակին պետք է ընդամենը սեմանտիկական պարզաբանումների տեղիք տար (Tremmel, 2009, էջ 49–50):

Փարֆիթության ոչ-նույնականության խնդիրը՝ որպես միջսերնդային արդարության հղացքի սահմանափակում

Եվս մեկ ու ոչ պակաս կարևոր սահմանափակում՝ ուղղված միջսերնդա-

յին արդարության հղացքին, ներկայացված է անգլիացի մտածող Դերեք Փարֆիթի հայտնի **«Պատճառներ և անձինք» (Reasons and Persons)** աշխատության մեջ: Խոսքը մտածողի կողմից առաջ քաշված **ոչ-նույնականության խնդրի (non-identity problem)** մասին է, որը շատ հեղինակների կողմից որպես հզոր հակափաստարկ է օգտագործվում ընդդեմ այն բանի, որ մենք պարտավորություններ ունենք սերունդների հանդեպ: Ոչ-նույնականության խնդիրը սահմանում է հետևյալը. մեր ներկա գործողությունները ազդում են ոչ միայն ապագա անձանց կյանքի պայմանների վրա, այլև այն բանի վրա, թե հատկապես որ մարդիկ գոյություն կունենան կամ գոյություն կունենան առհասարակ, թե ոչ: Կարող ենք ասել, որ ապագայի անձանց հետ կապված խնդիրն այն չէ, որ նրանք դեռ գոյություն չունեն, այլ այն, որ վերջիններս կարող են ընդհանրապես գոյություն չունենալ (Sikora, Barry, 1987, 186-200): Ուստի մեր գործողությունները որոշում են, թե ով կարող է ապագայում գոյություն ունենալ, այսինքն՝ մեր գործողություններից է կախված, թե ով ում հետ և երբ կկենակցի, հետևաբար ապագայի անհատների ծնվելը ևս կախված է ներկայիս մարդկանց գործողություններից: Փարֆիթն այս առիթով ներկայացնում է **ժամանակային կախվածության (time dependence)** փաստարկը, ըստ որի՝ եթե մի մարդ չբեղմնավորվեր իր իսկ բեղմնավորման պահին, ճիշտ կլիներ ասել, որ տվյալ մարդը երբեք էլ գոյություն չէր ունենա (Parfitt, 1984 էջ 351): Այլ կերպ ասած՝ եթե մեզնից որևէ մեկի բեղմնավորումը տեղի ունենար ժամանակի մեկ այլ հատվածում, ապա մենք գոյություն չէինք ունենա, քանի որ, ըստ Փարֆիթի, այդժամ մեր փոխարեն կլիներ արդեն ուրիշ մեկը: Վերը նշված փաստարկը ավելի ուժեղացնելու համար հեղինակը տալիս է նաև դեպքի կենսաբանական բացատրությունը. մեզնից յուրաքանչյուրն առաջացել է բջիջների հատուկ զույգից՝ ձվաբջջից ու սերմնաբջջից: Վերջինս միլիոնավորներից մեկն է, որը բեղմնավորում է: Անգամ եթե որևէ մեկի բեղմնավորումը կատարվեր մի քանի վայրկյան հետո, պտուղը կառաջանար նույն ձվաբջջից, սակայն լրիվ այլ սերմնաբջջից (Parfitt, 1984 էջ 351-352): Մտածողը ժամանակային կախվածության պնդմանը գումարում է նաև **ծնողային կախվածության (parental dependence) և գենետիկ կախվածության (genetic dependence)** պնդումները: Ծնողային կախվածության պնդման համաձայն՝ եթե որևէ մեկը չունենար այն ծնողները, որոնց իրականում ունի, ապա նա երբեք էլ գոյություն չէր ունենա (Dyke, 2003, էջ 209-218): Գենետիկ կախվածության պնդումը, պարզ է, նշում է, որ անձի ինքնությունը գոնե մասամբ կախված է նրա ԴՆԹ-ից, հետևաբար՝ եթե որևէ մեկը ստեղծված չլիներ այն հատուկ գենետիկական նյութից, որից իրականում ստեղծված է, ապա տվյալ մարդը երբեք էլ գոյություն չէր ունենա (Mulgan, 2002, էջ 3-15): Հաշվի առնելով այս ամենը՝ Փարֆիթը եզրակացնում է, որ արդյունքում գոյություն կունենար լրիվ այլ մարդ:

Իր հայտնի աշխատության մեջ Փարֆիթը ներկայացնում է ոչ-նույնականության խնդիրը բացատրող մի քանի դեպքեր, որոնք հաճախ արտացոլում են նաև մեր իրականությունը: Դեպքերից մեկում նկարագրվող տասնչոր-

սամյա աղջիկը որոշում է երեխա ունենալ՝ անկախ այն հորդորների, որ այդ տարիքում նա չի կարող երեխայի համար ապահովել բավականաչափ բարեկեցիկ կյանք: Ունենալով այդ երեխային՝ աղջիկը նրան կյանքի ոչ այնքան լավ սկիզբ է տալիս: Չնայած, որ այս հանգամանքը կարող է վատ անդրադարձ ունենալ երեխայի հետագա կյանքի վրա, այնուամենայնիվ, ըստ Փարֆիթի, այդ երեխայի կյանքը համարվում է **ապրելու արժանի (worth living):** Մյուս կողմից՝ եթե աղջիկը սպասեր մի քանի տարի և հետո ունենար երեխա, ապա այս՝ արդեն ծնված երեխան, երբեք էլ գոյություն չէր ունենա, իսկ նրա փոխարեն գոյություն կունենար լրիվ այլ երեխա (Parfitt, 1984 էջ 358–360): **Հաշվի առնելով այն փաստը, որ այդ երեխայի կյանքն ամեն դեպքում ապրելու արժանի է, հաշվի առնելով նաև այն, որ երեխայի համար հաստատ ավելի լավ չէր լինի, եթե նա ընդհանրապես գոյություն չունենար՝ կարելի է պնդել, որ երեխան որևէ վնաս չի կրել և ոչ էլ ավելի վատթար վիճակում է հայտնվել.** չկան հիմքեր այն դիրքորոշման համար, որ մոր արարքը երեխայի համար վատ է (Roberts, 2019): «Մենք պետք է հարց տանք,– գրում է Փարֆիթը,– երբ որևէ մեկն ապրում է մի կյանքով, որը ապրելու արժանի է, միթե սա ավելի վատ է այդ մարդու համար, քան այն, որ նա կարող էր երբեք էլ գոյություն չունենալ. մեր պատասխանը կլինի՝ ոչ» (Parfitt, 1984, էջ 359):

Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Փարֆիթի կարծիքով՝ անգամ վատթարագույն վիճակում գտնվող մարդու կյանքը, միևնույն է, ապրելու արժանի է: «Եթե որևէ մեկը ունենա կյանքի ավելի ցածր որակ, ես նրա կյանքը կհամարեմ ավելի քիչ արժանի ապրելու (less worth living)» (Parfitt, 1984, էջ 358): Կարելի է հետևություն անել. մտածողը գերադասում և արժևորում է վատթար վիճակի կյանքը բոլորովին գոյություն չունենալուց: Վերադառնալով տասնչորսամյա աղջկա դեպքին՝ մենք չենք կարող պնդել, որ երեխային ունենալը սխալ որոշում էր: Երեխային գոյություն պարգևելը, ըստ Փարֆիթի, արդեն իսկ օգուտ է երեխային, իսկ գոյություն ունենալը ավելի լավ է ընդհանրապես գոյություն չունենալուց: Մյուս կողմից էլ, եթե աղջիկը որոշեր սպասել, ապա գոյություն կունենար մեկ այլ երեխա: Այո՛, գուցե այդ երեխան ապրեր ավելի բարեկեցիկ կյանքով, սակայն սա արդեն այլ հարց է, քանի որ գործ կունենայինք լրիվ այլ երեխայի հետ: «Այս հարցը ծագում է այն պատճառով, քանի որ տարբեր հանգամանքներում տարբեր մարդիկ կծնվեին» (Parfitt, 1984 էջ 359),– նշում է Փարֆիթը:

Նման մեկ այլ օրինակ է բժշկի դեպքը, որին ապագա ծնողները հարցնում են, թե կա որևէ հավանականություն, որ տվյալ հիվանդությունը կարող է գենետիկորեն փոխանցվել իրենց երեխային, եթե նրանք որոշեն ժամանակի որոշակի հատվածում բեղմնավորել վերջինիս: Բժշկի բացասական պատասխանից հետո ապագա ծնողները երեխա են ունենում, որը, սակայն, ժառանգած է լինում հիվանդությունը: Ծնողները դատի են տալիս բժշկին իրենց իրավունքները խախտելու համար. նա պարտավոր էր ճիշտ տեղեկություն տալ հիվանդության փոխանցման հնարավոր ռիսկերի վերաբերյալ: Եթե կիրառենք Փարֆիթի առաջարկած գենետիկ կախվածության պնդումը,

ապա պետք է նշենք, որ բժիշկը վնասել է ծնողներին, այլ ոչ թե երեխային, քանի որ ծնողները չէին ունենա այդ երեխային, եթե բժիշկը նրանց ստույգ տեղեկություն տված լիներ (Tremmel, 2009 էջ 35): Ամեն դեպքում այստեղ ևս երեխայի կյանքը ապրելու արժանի է: Որպես ընդհանրացում՝ կարելի է ասել, որ ոչ-նույնականության խնդրի ներկայացուցիչների կարծիքով՝ **հնարավոր չէ** վնասել ապագայի անհատներին կամ ապագայի անհատներից կազմված սերունդներին, եթե նրանց կյանքը ապրելու արժանի է: Քանի որ, եթե «Ա» սերունդը գործեր մեկ այլ կերպ, ապա «Բ» սերնդի փոխարեն գոյություն կունենար մեկ այլ՝ «Գ» սերունդ:

Եզրակացություն

Միջսերնդային արդարության հղացքը սահմանափակող խնդիրները հիմնականում ծավալվում են ապագա սերունդների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու, ինչպես նաև ապագա սերունդների՝ իրավունքներ ունենալու հարցադրումների շուրջ: Հղացքի սահմանափակումներից մեկն էլ Փարֆիթի կողմից առաջ քաշված ոչ-նույնականության խնդիրն է, ըստ որի՝ մեր գործողությունները ազդում են ոչ միայն ապագայի մարդկանց կյանքի պայմանների, այլև ուղղակիորեն այն բանի վրա, թե առհասարակ ովքեր գոյություն կունենան: Հետևապես՝ մենք չենք կարող վնասել ապագա սերունդներին, քանի որ նրանց կյանքը, **անկախ ամեն ինչից, ապրելու արժանի է,** և հետո՝ մեր տարբեր գործողությունների արդյունքում կարող են առաջանալ լրիվ այլ սերունդներ:

Օգտագործված գրականության ցանկ

Beckerman, W. (2004). *Intergenerational Justice Review* (English edition), Vol. 4, Foundation for the Rights of Future Generations Publishing, Oberursel.

Dyke, H. (2003*). Time and Ethics: Essays at the Intersection.* Kluwer Academic Publishers.

Löfquist, L. (2008). *Ethics Beyond Finitude: Responsibility Towards Future Generations and Nuclear Waste Management.* Uppsala.

Meyer, L. (2016). *Intergenerational Justice.* 2.Rights of Future People vis-à-vis Presently Living People, The Stanford Encyclopedia of Philosophy, Edward N. Zalta (ed.): Retrieved from https://plato.stanford.edu/entries/justice-intergenerational/#RigFutPeoVisVisPreLivPeo մուտք՝ (accessed) 10.08.2021:

Mulgan, T. (2002). *Neutrality, Rebirth and Intergenerational Justice.* Journal of Applied Philosophy, Volume 19, Issue 1, Wiley Publishing, New Jersey.

Parfitt, D. (1984). *Reasons and Persons.* Oxford University Press, New York.

Rawls, J. (1971). *A Theory of Justice.* Revised Edition, Cambridge, Harvard University Press.

Roberts, M. (2019). *The Nonidentity Problem.* 2.4 The 14-year-old girl, The Stanford Encyclopedia of Philosophy, Edward N. Zalta (ed.). Retrieved from https://plato.stanford.edu/entries/nonidentity-problem/#SlavChil, մուտք՝ (accessed) 10.09.2021:

Sikora, R. I, Barry, B. (1987). *Obligations to Future Generations.* The Futurity Problem (Gregory S. Kavka), Temple University Press, Philadelphia, 1987.

Tremmel, J. C. (2006). *Handbook of Intergenerational Justice.* Distinction Between Intergenerational Justice and Intragenerational Justice, Edward Elgar Publishing Limited, Cheltenham.
Tremmel, J. C. (2009). *A Theory of Intergenerational Justice.* Earthscan, London.

Гамлет Симонян
Магистрант Кафедры социальной философии
этики и эстетики Ереванского государственного университета,
Эл. адрес: hamlet.simonyan.99@gmail.com

ОГРАНИЧЕНИЕ КОНЦЕПТОВ МЕЖПОКОЛЕНЧЕСКОЙ СПРАВЕДЛИВОСТИ

В статье представлены философские мысли, которые тем или иным образом ограничивают концепт межпоколенческой справедливости. Поскольку указанные ограничения не действуют независимо, то, в первую очередь, была предпринята попытка провести связь между терминами «межпоколенческая справедливость» и «ответственность». Важным образом был затронут вопрос о принятии на себя ответственности перед будущими поколениями, а также вопрос наличия прав будущих поколений, в частности, этических учений, исключающих их необходимость. В статье также отражена проблема парфянской неидентичности как одно из ограничений концепта межпоколенческой справедливости. Работа направлена на выявление недостатков моральных учений, построенных на концепте межпоколенческой справедливости, с указанием теоретических ограничений, которые, в свою очередь, влияют на материализацию проблемы в практической сфере. Одна из целей работы – повысить уровень осведомленности общественности. В статье отражены теории справедливости, которые уникальным образом представляют четкий императив взаимоотношений будущих поколений с сегодняшними людьми, подводят к выводу, что тема справедливости между поколениями полна ряда пробелов и ограничений.

Ключевые слова: справедливость, ответственность, права, будущие поколения, проблема неидентичности.

Hamlet Simonyan
MA student at the Chair of Social Philosophy,
Ethics and Aesthetics, Yerevan State University
Email: hamlet.simonyan.99@gmail.com

THE LIMITATIONS OF THE CONCEPT OF INTERGENERATIONAL JUSTICE

The article presents philosophical thoughts which somehow limit the concept

of intergenerational justice. Since the mentioned limitations do not apply incoherently, first of all, an attempt has been made to introduce the connection between the terms “intergenerational justice” and “responsibility”. Reference is made to the issue of taking responsibility for future generations, as well as to the issue of future generations having rights, in particular to the moral doctrines that exclude the need for the latters. The article addresses Parfitt’s non-identity problem as one of the limitations of the concept of intergenerational justice. The work aims at identifying the disadvantages of moral doctrines built around the concept of intergenerational justice, pointing out the theoretical limitations, which in turn affect the practical field of the problem. One of the goals of the work is to raise the level of awareness on the topic among the public. The article reflects theories of justice, which uniquely presenting the clear imperative of the relations between future generations and present people, conclude that the topic of justice between generations is full of a number of gaps and limitations.

Key words: justice, responsibility, rights, future generations, non-identity problem.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. հոկտեմբերի 1-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2021թ. հոկտեմբերի 5-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2021թ. հոկտեմբերի 15-ին: